№ 12 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 19 — 1902 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 19 № 12

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(30-Դ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ 1902 ԹԻԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ. երկու ամսվանը՝ 2 ռ. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ ԲԱԳԻՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազդեցութեան հարց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայերը «Кавказскій Вѣстникъ» ամսագրի մէջ. Վրաց թատրօն. Նամակ Խմբագրութեան։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիան եւ Տրանսվաալը. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երուսաղէմում.

## ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ներկայումս առանձին նշանակութիւն է ստացել Պարսից Ծոցը։ Եւրոպական պետութիւնները ուշի ուշով հետեւում են այն բոլոր եղելութիւններին, որոնք այնտեղ կատարվում են, որպէս զի իրանց շահերի համար առաջ չը գան անհարմար փոփոխութիւններ։

Պարսից Ծոցում առաջնակարգ շահեր ունեն երեք եւրոպական եւ երկու ասիական պետութիւններ։ Դրանք են մի կողմից Անգլիան, Ռուսաստանը եւ Գերմանիան, իսկ միւս կողմից Թիւրքիան եւ Պարսկաստանը։ Եւրոպական պետութիւնները ձգտում են թէ Պարսից Ծոցի ջրերը եւ թէ նրա ծովափերը գցել իրանց ազդեցութեան շրջանի մէջ, իսկ ասիական պետութիւնները ձգտում են չը կորցնել իրանց քաղաքական իրաւունքները այդ ծովափներում եւ ժամանակ վաստակել իրանց գոյութիւնը այնտեղ ամրացնելու համար։ Պարսկաստանը եւ Թիւրքիան իրանք կորցրել են հեղինակութիւն Պարսից Ծոցի ափերում, բայց նրանք վճռոկան դեր են կարողանում խաղալ, նայելով թէ եւրոպական որ պետութիւնն է նրանց խոստանում օգնել եւ պաշտպանել։

Անգլիայի համար Պարսից Ծոցը ունի կարեւոր նշանակութիւն թէ ընդհանուր առեւտրի տեսակէտից եւ թէ այն քաղաքական նկատմամբ, որ Պարսից Ծոցը անմիջապէս կապված է Հնդկական ջրերի հետ, ուր գտնվում են Անգլիայի հողերը։ Անգլիան ձգտում է Պարսից Ծոցի երկու ափերն էլ իրապէս իր քաղաքական ազդեցութեան տակ պահել, որպէս զի կարողանայ անարգել կերպով այնտեղ տարածել իր ցանցերը եւ դիմադրել ուրիշ պետութիւնների արշաւանքներին դէպի Հընդկաստան։

Ռուսաստանի համար Պարսից Ծոցը կարեւոր է, իբրեւ մի բնական ելք դէպի մեծ ջրերը, դէպի ովկիանոսները։ Ռուսաստանի ընդարձակ սահմանները արեւելքից մի փոքրիկ լուսամուտ ունեն Վլադիվոստոկի ծովափարջանում, արեւմուտքից Ֆինեական Ծոցը, հարաւարեւմուտքից Սեւ Ծովը, իսկ հարաւի երկար սահմանները ոչ մի ելք չունեն դէպի ծովերը։ Բնական է, որ Ռուսաստանը, թէ իր առեւտրի զարգացման եւ թէ իր միջազգային յարաբերութիւնների ընդարձակման տեսակէտով, պէտք է ձգտի տեղ ունենալ Պարսից Ծոցի վրա։

Գերմանիայի համար Պարսից Ծոցը առանձին նշանակութիւն ստացաւ այն օրից, երբ նա սկսեց մշակել Բաղդադի երկաթուղու ծրագիրը։ Պարսից Ծոցը այդ երկաթուղու բնական շարունակութիւնն է։ Թէ իր ընդհանուր առեւտրի եւ թէ Բաղդադի երկաթուղու շահերը պահանջում են, որ Գերմանիան յատուկ ուշադրութիւն դարձնէ Պարսից Ծոցի վրա, ապահովելով նրան այն խոչընդոտներից, որոնք կարող են վնասել այդ շահերին։

Վերջին ամիսներում Պարսից Ծոցում տեղի ունեցան մանր-մունր ընդհարումներ Անգլիայի եւ տեղական իշխանների միջեւ, որոնք ուրիշ ժամանակ չէին գրաւի եւրոպացիների ուշադրութիւնը իրանց վրա, իսկ այժմ նրանք ոչ միայն դարձել են յատուկ հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան առարկայ, այլ եւ կարող են առիթ լինել միջազգային սուր հարցապնդումների։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԵՐԸ «КАВКАЗСКІЙ ВѢСТНИКЪ» ԱՄՍԱԳՐԻ ՄԷՋ

V

Մի քանի խօսք էլ—եւ մենք վերջ կը տանք մեր նկատողութիւններին։

Ամսագրի մէջ տպված է, իբրեւ պատմական դոկումենտ, մի թուղթ։ Դա մի մատնութիւն է Ներսէս V կաթողիկոսի դէմ։ Թղթի տակ դրված է «Հայեր» (Армяне) բառը իբրեւ ստորագրութիւն եւ թուականը—1855։

Չէ կարելի երեւակայել աւելի կեղտոտ եւ զզուելի մատնութիւն։ Բազմաթիւ մեղադրանքն կէտերից բերենք մի քանիսը։

Ներսէսը չէ ճանաչում ռուսաց Թագաւորին եւ ռուսաց օրէնքները։ Ներսէսը ուտում է եկեղեցական փողերը. նա չինել է տուել էջմիածնում մի ահագին լիճ, որ բոլորովին անօգուտ է վանքի համար (Ներսէսի կարճամիտ թշնամիների յիմարութեան մի ապացոյց)։ Ներսէսը անաստուած է. «նա ասում է թէ սուրբ Կոյսը Փրկչին ծնելուց յետոյ բնական կերպով չէր կարող կոյս մնայ, որ նրան ոչ ոք չէ քննել, որ Ղազարոսի մահը ուրիշ մի բան չէր, եթէ ոչ լեթարգիական քուն, որի մասին գիտէր Քրիստոս, որ Նախախնամութիւնը մեր գործերի մէջ մասնակցութիւն չունի, որ չը կան հրեշտակներ եւ այլն։ Լինելով միանգամայն առողջ եւ 5 կամ 6 ժամ կանգնելով ռուս բարձր պաշտօնեաների թաղմանը, ոտքով յուղարկաւորութեան հետ գնալով քաղաքից դուրս եւ ժամերով ներկայ լինելով օրիորդական ինստիտուտի տարեկան հարցաքննութիւններին եւ ակտերին, նա արդէն 4 տարի է, ինչ չէ պատարագում եւ չէ հաղորդվում»։

Բայց այս բոլորը դեռ անմեղ բաներ են։ Տեսէք թէ էլ ինչեր կան։

Կայսերական տօներին Ներսէսը մի հասարակ քահանայ է նշանակում մաղթանք կատարելու եւ «երբ ժողովուրդը տրտնջում է, նա յանդգնաբար պատասխանում է. «Թագաւորը ինձ ոչինչ չէ տալիս, ես պարտաւոր չեմ նրա համար մաղթանք կատարել։ Նա ինձ ոչինչ չէ կարող անել. նա կարծում է, թէ ես շուտով կը մեռնեմ, բայց սխալվում է, ես նրանից շատ կապրեմ»։ Նա նոյն իսկ արգելել է մաղթանքի եւ պատարագի ժամանակ յիշատակել Օգոստափառ Տան բոլոր անունները, եւ դժբախտ քահանաները նրա ներկայութեամբ յիշատակում են միայն Թագաւորի, Թագուհու եւ Ժառանգի անունները, այն էլ շուտ-ասելիքով եւ ոչ պարզ կերպով։ Թափօրի ժամանակ նա հրամայեց յիշատակել նախ կաթողիկոսի տիտղոսը եւ ապա միայն Թագաւոր Կայսրին»։

«Թէեւ այնքան ծեր է, բայց պահում է իր մօտ ջահիլ եւ սիրունատես տիրացուներ։ Դրանցից շատերը գողացել են նրանից 7 կամ 10 հազար ռուբլի արծաթ եւ փախել են։ Ներսէսը ադամանդուզ, շաքարեղէգն, ձմերուկ, խաղող, թուզ, թութ։ Դուրս գալով քաղաքից մենք անցանք երկու կարգ պտղաւէտ պարտէզների միջով մինչեւ Սարօնի դալարագեղ դաշտը, որ ծածկված էր անհամար ծաղիկներով։ Այս դաշտը անուանի է Աստուածաշնչի մէջ. այստեղ Սամսօնը այրեց փղշտացիների հունձերը, 300 աղուէս բաց թողնելով նրանց մէջ, ագիներին վառած ջահեր կապած։

Ճանապարհի վրա հիւրընկալ վարդապետը շարունակ ցոյց էր տալիս մեզ հին քաղաքների տեղեր, աւերակներ, որոնց անունները կապված են աստուածաշնչի այս կամ այն պատմութեան հետ։ Այդ բոլոր տեղերին մենք ապրում էինք Հին Կտակարանի կեանքով, յիշողութիւններով. զգում էինք մեզ ոչ թէ XIX դարում, այլ Դաւթի, Սողոմոնի, Երեմիայի, Եսայի ժամանակներում, հեռաւոր, շատ հեռու հնութեան մէջ. մենք ասես մի բոպէ սրտատրոփ սպասում էինք, թէ երբ կերեւայ Երուսաղէմը, Սողոմոնի տաճարի գմբէթը, Համբարձման լեռը։

Բայց ահա, ճանապարհից դուրս, մի քիչ հեռու, երեւում է Ռէմլէ քաղաքը, հին Արեմաթիան. այդտեղ է Քառասուն Մանկանց աշտարակը, որ այժմ մզկիթի է վերածված։ Ռէմլէն միջին դարերում մեծ չէն քաղաք էր, պարսպապատ եւ 12 դռներով, բայց այսօր աւերակների կոյտ է ներկայացնում։ Հայերը այստեղ էլ ունեն մի վանք, տեսուչ եւ թարգման. այդտեղի դարպասական տուրքը Ցոպէում են վճարում։ Ահա, հեռուն եւ Նոր քաղաքը, այժմ Պէյթ-Նուբա, հայրենիք Աբամելիք քահանայապետի, որ Դաւթին մատուցեց առաջաւորաց հացը։ Ահա եւ հին Մոզդիմը, Մակաբէների հայրենիքը. Նէբի-Սամուէլը՝ կամ Ռաման՝ Սամուէլ մարգարէի հայրենիքը. Այն-Քէրիմ գիւղը՝ Յովհաննէս Մկրտչի ծընընդավայրը. վերջապէս՝ ահա երեւաց Համբարձման լեռը, իսկ մի քիչ յետոյ Երուսաղէմի տաճարների ոսկեզօծ գմբէթները։

Բայց դեռ քաղաքի գլխաւոր դռան չը հասած, մի ամբողջ արուարձան էք տեսնում ճանապարհի երկու կողմին գեղեցիկ տներով. այդտեղ զետեղված են հրէական, այն է գլխաւորապէս Բօռչիլդի նպաստներով պահվող մարդասիրական եւ ուսումնական հաստատութիւնները. այդտեղ է եւ ռուսաց մեծ վանքը, որ հիմնվել է 1858-ին եւ հետզհետէ զարգարվում է ընդարձակ, գեղեցիկ շինութիւններով։ Արուարձանից յետոյ գալիս է մաքսատունը եւ վերջապէս, մենք հասնում ենք Ցոպէի դռան, որ արաբները կոչում են Բաբ-ուլ-խալիլ (Աբրահամի դուռը) եւ մենք արդէն մտնում ենք Երուսաղէմ։

—

Չը գիտեմ, ինչու Երուսաղէմը տեսնելիս, յանկարծ միտքս ընկաւ Աւետարանի խօսքը՝ «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն եւ քարկոծ առէիր զառաքեալսն» ի հարկէ, այդտեղ այժմ այլ ելս չեն կոտորում մարգարէներին եւ առաքեալներին, գուցէ այն պատճառով, որ մեր ժամանակում այլ ելս չը

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

(Թուղթեր տպաւորութիւններ)

I

1893 թ. յուլիս ամսին էր, երբ եգիպտական չոգենաւը Ալէքսանդրիայից տանում էր մեզ Ցոպպէ, Պալեստինի նաւահանգիստը։ Շոգենաւի մէջ կային Արիստակէս Սեդրակեան եւ Սարգիս եպիսկոպոսները, Մեսրոբ եւ Եփրեմ վարդապետները, Յ. Խաչատրեան եւ ես։ Էջմիածնի պատուիրակները գնում էին Երուսաղէմ նորընտիր կաթողիկոսին հրաւիրելու եւ հայրապետական գաւազանը յանձնելու, իսկ մենք երկուսս ճանապարհորդում էինք իբրեւ ուխտաւորներ։

Սովորութիւն է, որ ուխտաւորները, գալով Պալեստինի քաղաքները, իջեւանում են ոչ թէ հիւրանոցներում, այլ իրանց ազգային վանքերի մէջ, որոնցով լի է այդ երկիրը։ Բնականաբար, հասնելով Ցոպպէ մենք իջեւանեցինք հայոց վանքում, որ կառուցված է ծովի հանդէպ, լատինների եւ յունաց վանքերի կողքին։ Վանքը ունի մի տեսուչ վարդապետ, մի ժամարար, մի քանի աշխատաւոր միաբաններ, մի թարգման եւ մի պահակ։ Բոլոր ուղեւորները եւ ուխտաւորները, ինչ ազգի եւ պատկանեն, այցելում են հայոց վանքը, որ պատմական հռչակաւոր է։ Նեսքէս V կաթողիկոսի դէմ։ Թղթի տակ դրված է «Հայեր» (Армяне) բառը իբրեւ ստորագրութիւն եւ թուականը—1855։

Չէ կարելի երեւակայել աւելի կեղտոտ եւ զզուելի մատնութիւն։ Բազմաթիւ մեղադրանքն կէտերից բերենք մի քանիսը։

Ներսէսը չէ ճանաչում ռուսաց Թագաւորին եւ ռուսաց օրէնքները։ Ներսէսը ուտում է եկեղեցական փողերը. նա չինել է տուել էջմիածնում մի ահագին լիճ, որ բոլորովին անօգուտ է վանքի համար (Ներսէսի կարճամիտ թշնամիների յիմարութեան մի ապացոյց)։ Ներսէսը անաստուած է. «նա ասում է թէ սուրբ Կոյսը Փրկչին ծնելուց յետոյ բնական կերպով չէր կարող կոյս մնայ, որ նրան ոչ ոք չէ քննել, որ Ղազարոսի մահը ուրիշ մի բան չէր, եթէ ոչ լեթարգիական քուն, որի մասին գիտէր Քրիստոս, որ Նախախնամութիւնը մեր գործերի մէջ մասնակցութիւն չունի, որ չը կան հրեշտակներ եւ այլն։ Լինելով միանգամայն առողջ եւ 5 կամ 6 ժամ կանգնելով ռուս բարձր պաշտօնեաների թաղմանը, ոտքով յուղարկաւորութեան հետ գնալով քաղաքից դուրս եւ ժամերով ներկայ լինելով օրիորդական ինստիտուտի տարեկան հարցաքննութիւններին եւ ակտերին, նա արդէն 4 տարի է, ինչ չէ պատարագում եւ չէ հաղորդվում»։

Բայց այս բոլորը դեռ անմեղ բաներ են։ Տեսէք թէ էլ ինչեր կան։

Կայսերական տօներին Ներսէսը մի հասարակ քահանայ է նշանակում մաղթանք կատարելու եւ «երբ ժողովուրդը տրտնջում է, նա յանդգնաբար պատասխանում է. «Թագաւորը ինձ ոչինչ չէ տալիս, ես պարտաւոր չեմ նրա համար մաղթանք կատարել։ Նա ինձ ոչինչ չէ կարող անել. նա կարծում է, թէ ես շուտով կը մեռնեմ, բայց սխալվում է, ես նրանից շատ կապրեմ»։ Նա նոյն իսկ արգելել է մաղթանքի եւ պատարագի ժամանակ յիշատակել Օգոստափառ Տան բոլոր անունները, եւ դժբախտ քահանաները նրա ներկայութեամբ յիշատակում են միայն Թագաւորի, Թագուհու եւ Ժառանգի անունները, այն էլ շուտ-ասելիքով եւ ոչ պարզ կերպով։ Թափօրի ժամանակ նա հրամայեց յիշատակել նախ կաթողիկոսի տիտղոսը եւ ապա միայն Թագաւոր Կայսրին»։

«Թէեւ այնքան ծեր է, բայց պահում է իր մօտ ջահիլ եւ սիրունատես տիրացուներ։ Դրանցից շատերը գողացել են նրանից 7 կամ 10 հազար ռուբլի արծաթ եւ փախել են։ Ներսէսը

սպառնում էր, թէ նրանց ետեւից մարդ կուղարկէ բռնելու, բայց նրանք պատասխանում էին. թող նա մեզ հանգիստ թողնէ, թէ չէ մենք կը հոչակենք նրա կապերը մեզ հետ եւ կապացուցանենք անկասկածելի փաստերով։ Եւ Ներսէսը լռում էր։ Ամենքին յայտնի է, որ Բեսարաբիայում նա պահում էր իր մօտ մի այրի երէցակին մնտեսուհու անունով եւ նա ման էր գալիս Ներսէսի կառքում»։

«Ներսէսը սերտ յարաբերութիւն է պահպանում պարսից հիւպատոսի հետ, շաբաթը երկու կամ երեք անգամ ճաշ է տալիս նրան, ամեն մի տեսնելիս գրկում եւ համբուրում է նրան եւ փակվելով նրա հետ մի սենեակում, երկարատեւ գաղտնի խօսակցութիւն է ունենում նրա հետ։ Նրան մօտիկ հայերից մի քանիսին ճշմարտապէս յայտնի է, որ Ներսէսը այդ հիւպատոսի միջոցով ուղարկում է պարսից Շահին մեծ փողեր եւ աշխատում է համոզել նրան (Շահին), որ օգտվէ քաղաքական գործերի ներկայ դրութիւնից (Ղրիմի պատերազմ) եւ միանայ թշնամի պետութիւններին, խոստանալով նրան, որ նրա տուած առաջին նշանով ինքը կապստամբեցնէ Անդրկովկասի հայերին Ռուսաստանի դէմ եւ կը կազմէ նրանցից ուժեղ զօրք»։

Կարծում ենք այսքանն էլ բաւական է այդ «պատմական զօկումենտի» արժանիքը ցոյց տալու համար։ Ներսէսը միշտ ունէր թշնամիներ, որոնք աշխատում էին տապալել այդ երկաթէ մարդուն, բայց իրանք էին տապալվում։ Հաւանական է, որ այդ թշնամիներից մի քանիսը, մանաւանդ Ներսէսի խարազանին ենթարկված գող հոգեւորականները, կազմած լինեն մի այդպիսի ստոր, կեղտոտ թուղթ։ Բայց հարցը այնքան սեւահոգի մատնիչներին չէ վերաբերվում։

Ո՞րտեղից է ռուս ամսագիրը վերցրել այդ կեղտոտ «զօկումենտը». գիտէ՞ նա արդեօք հաստատապէս, թէ այդ «գօնօսը» ուղարկված է եղել կառավարութեան եւ եթէ գիտէ, ինչո՞ւ պարտք չէ համարել բացատրել, թէ ինչ է եղել այդ թղթի վախճանը. կատարվել է քննութիւն, ինչ է ցոյց տուել քննութիւնը. կամ գուցէ կառավարութիւնը դէն է գցել այդ թուղթը, իր արժանապատուութեան համար անպատուաբեր համարելով ուշադրութիւն դարձնել այդպիսի ստոր բաների վրա։

Երկրորդ. խմբագրութեան ձեռքում գտնվող թղթի վրա կան ստորագրութիւններ։ Եթէ կան, ինչո՞ւ չեն տպագրվել այդ անունները, որպէս զի կարելի լինի իմանալ, թէ Ներսէսի ո՞ր անխիղճ թշնամիների ձեռքի գործն է դա։ Եթէ չը կան ստորագրութիւններ, նշանակում է, որ դա մի անօնիմ մատնութիւն է. բայց այդպիսի թղթերը ոչ միայն չեն տպում իբրեւ զօկումենտ, այլ նոյն իսկ չեն էլ կարդում։

Թղթի տակ, ինչպէս ասացինք, գրված է «Հայեր» ստորագրութիւնը։ Բանից դուրս է գալիս, որ, ուրեմն, եթէ ոչ ամբողջ հայ ժողովուրդը, գոնէ նրա մի նշանաւոր մասն է այդքան խայտառակ զրպարտութիւններ դրել Ներսէսի վրա, այն Ներսէսի, որ հայութեան սիրելին է, նրա պարծանքն է ոչ միայն Ռուսաստանում, այլ եւ Թիւրքիայում, ամեն տեղ, ուր հայ կայ։

Մեծ, աննկարելի անտակտութիւն է ամսագրի համար առանց երկար ու բարակ մտածելու, առանց որ եւ է բացատրութեան, վեր կենալ եւ մի այդպիսի հաւաքական անուն դնել մի վատ թղթի տակ։ Կարող է պատահել, որ խմբագրութեան ձեռքում եղած թղթի վրա էլ հէնց այդպէս գրված է—«Հայեր»։ Բայց այս դէպքում թուղթը դարձեալ դառնում է ատելի, մի կամ երկու հայ կարող էին այդպիսի լրբութիւններ գրել եւ ստորագրել «Հայեր»։ Բայց տպվածը այնպիսի տպաւորութիւն է թողնում, որ կարծէք թէ հայ ժողովուրդն է գրողը։

Եւ մ՞թէ ռուս ամսագրի համար այնքան դժուար էր ճանաչել Ներսէսին եւ գոնէ մի քանի տողով ցոյց տալ ընթերցողներին, թէ ինչ բան է այդ «գօնօսը»։ Եթէ ամենից լաւատեղեակ եւ հեղինակաւոր հայագէտի յաւակնութիւն ունեցող «Кавказскій Вѣстникъ»-ը չէ ճանաչում այնպիսի հայկական աղբիւրներ, որոնք ցոյց տային, թէ ով էր եւ ինչ էր Ներսէսը, կան ռուսերէն բազմաթիւ աղբիւրներ։ Վերցրէք Պոտտոն, վերցրէք իշխան Վորոնցովի պէս մի երեւելի պետական մարդուն, նայեցէք իշխան Բարեատինսկու գրութիւններին, եւ ամեն տեղ ու ամեն քայլում կը տեսնէք, որ Ներսէսը ամեն բան կարող է լինել, միայն ոչ Ռուսաստանի թշնամի։ Այն մարդը, որ իսկը ձեռքին առաջնորդում էր ռուսաց զօրքերը Անդրկովկասում, որին դիմում էր ռուսաց կառավարութիւնը, որի անունով Բարձրագոյն հրովարտակներ էին հրատարակվում, որին անձամբ ճանաչում էր Նիկոլայ Կայսրը, որի սրբտակից բարեկամն էր Վորոնցովը, մ՞թէ արժանի չէր, որ ռուսաց ամսագրի կողմից գոնէ մի քանի բառով պաշտպանվէր այն ստոր մատնութեան դէմ, որ այսօր տպագրվում է չը գիտենք ում համար եւ ինչի համար։

Չը գիտէին մ՞թէ «Кавказскій Вѣстникъ»-ի գլխավորները, որ զզուելի ստերով ու զրպարտութիւններով լի մի թղթի տպագրութիւնը վիրաւորական մի բան է ամբողջ հայ ժողովրդի համար, Չէ՞ որ այդ ժողովուրդը համոզված է, որ Ներսէսի պէս կաթողիկոս նա չէ ունեցել ոչ միայն XIX դարում, այլ նրանից էլ շատ առաջ։ Եւ սակայն, ինչպէս է ներկայացրված այդ կաթողիկոսը ամսագրի տպած «գօկումենտի» մէջ։ Սարսափելի է նայելը. եւ ոչ մի խօսք, ոչ մի բացատրութիւն...

Որքան առատ նիւթ է դա կոյր հայատեացների եւ հայակերների համար։ Եւ սակայն, ամսագիրը նոյն համարում ազգանունների վրա է երկար ու բարակ դատողութիւններ անում եւ առաջարկում էիր դիւտը իբրեւ փրկարար միջոց Սուվորինների եւ Գրինդմուտների դէմ։ Հապա այս իբր թէ դաւաճան, գող, արուագէտ կաթողիկոսը, որին հայերը համարում են ամենալաւը իրանց հովիւների մէջ։

Ահա ինչ է անում չափ ու սահման չը ճանաչող եռանդը...

---

## ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, յունվարի 17-ին, վրաց ազնուականների թատրոնում կայացաւ տաղանդաւոր դերասանուհի Մ. Սափարովա-Աբաշիձէի բենէֆիսը։ Ցարգելի դերասանուհին ահա քանի տարի է կորցրել է լսողութիւնը եւ անկարող է այժմ նոր դերեր պատրաստել, այդ պատճառով էլ բեմի վրա շատ ուշ ուշ է երեւում եւ այն էլ հին խաղացած դերերում, որոնց անգիր գիտէ. սակայն, չը նայած տիկնոջ պատկառելի տարիքին եւ այս պակասութեանը, հանդիսականը մեծ բաւականութիւն է ստանում նրա նուրբ, մշակված խաղից, խաղից, որին կարող են նախանձել երիտասարդ դերասանուհիները։

Այդ դիշերը խումբը ներկայացրեց յայտնի բանաստեղծ Ակակի Ծէրէթէլիի «Նենգ Թամարա» 5 գործողութեամբ դրամատիքական պօէման, եւ Ռ. Էրիսթաֆի փոխադրած «Հօրեղբօր հետ հանաքս» 1 գործողութեամբ կոմեդիան։

Առաջին պիեսը ոտանաւորով է եւ գրված է գեղեցիկ լեզուով. այդ պիեսը շատ լաւ տպաւորութիւն է թողնում ընթերցանութեան ժամանակ, այն ինչ ներկայացումը նոյն տպաւորութիւնը չարաւ, չնորհիւ մի քանի դերասանների դերեր չիմանալուն եւ ոտանաւորների աղաւաղմանը. թագուհու դերը խաղում էր նախկին դերասանուհի տ. Անդրոնիկովան, իսկ բանաստեղծի դերը տաղանդաւոր Ալէքսէեվ-Մէսխիէվ. երկուսն էլ աջողութիւն ունեցան։ Մեծ աջողութիւն ունեցաւ ինքը՝ տ. Սափարովան կոմէդիայի մէջ. դուր եկան հասարակութեանը նաեւ երգած կտորները։

Հասարակութիւնը, որը լցրել էր թատրոնը, մեծ ուրախութեամբ դիմաւորեց իր սիրած դերասանուհուն եւ մատուցեց մի քանի ընծաներ։

Ներկայացման վերջը կայացաւ զաւեշտ, որի մէջ տ. Գաբունիա-Ցագարէլին դուդուկի ներդաշնակութեամբ երգեց մի քանի կտորներ, իսկ տիկ. Անդրոնիկովան պարեց ուղղնդարտ, դաղուլի եւ լեզգինկա։ Հասարակութիւնը ցրվեց լաւ տպաւորութեան տակ։

Т.

---

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունվարի 18-ին

«Մուրճ» ամսագրի № 10-ի մատենախօսութեան մէջ տպված էր «Հաթ.» ստորագրութեամբ մի նկատողութիւն պ. Ն. Տէր-Ղեւոնդեանի ա. տարվայ «Մայրենի լեզուի» մասին։ Վիրաւորված «մանկավարժը» իսկոյն ուղարկում է «Մուրճին», սրա սրբագրողի ձեռքով, մի պատասխան, պայման դնելով, որ անփոփոխ տպագրվի։ Խմբագրութիւնը (եւ ոչ ես անձամբ) նոյն սրբագրողի միջոցով յայտնում է պ. Տէր-Ղեւոնդեանին, որ «խմբագրական կանոնների» 4-րդ կէտի համաձայն, «խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը»։ Հետեւաբար, պարոնի առաջարկած պայմանով նրա յօդուածը չէ կարող ընդունվել։

Թէ առանձնապէս ես, Լ. Ս—ս, ինչ մեղք ունէի այդ պարզ իրողութեան մէջ, մինչեւ այժմ էլ մնում է անյայտ, չը նայած իմ հասցէին պարոնի ուղղած լուտանքներին, որ այնքան սիրելիութեամբ տպել է «Լուման» (երես 243)։

Շատ բնորոշ է այդ երեւոյթը մեր գրական ասպարէզում։ Զայրացած «մանկավարժը» իսկոյն իր շահերի վտանգման մասին է մտածում եւ սպառազինվում երեւակայական թշնամու դէմ... Նախ ձգտում է պարոնը ընթերցողի մտքի մէջ կասկած գցել. չը լինի թէ «Հաթը» հէնց ինքը Լ. Ս.—ն է։ Եթէ բարեխիղճ մարդ լինէր այդ «մանկավարժը», նա կարող էր շատ ճիշդ տեղեկութիւն քաղել նոյն սրբագրողից եւ համոզվել, որ «Հաթը» այլ անձնաւորութիւն է։ Երկրորդ՝ չը բաւականանալով այդ տգեղ ֆօրտելով, զինքը կորցրած պարոնը նամստոր զրպարտութեան է դիմում. նա ջանք է գործ դնում համոզել միամիտներին, թէ ես Լեւոն Սարգսեանցս, «հաշտ աչքով չեմ կարողանում նայել նրա դասագրքի վրա», որովհետեւ, երեւակայեցէք... «Մայրենի խօսք» դասագիրքն եմ յօրինել...

Տեսնում էք որքան ազնիւ է եւ փափկանկատ այդ «մանկավարժը». առանց քաշվելու նա զրպարտում է ամենասնհին եւ թեթեւամիտ մի ենթադրութիւն միայն անելով։

Բայց այդպիսի դուքանչիական հաշիւներ ունեցող պարոնը մ՞թէ կարող է այլ կերպ մտածել մարդկանց մասին... Ցաւելով «Մայրենի լեզուի» հեղինակի այդքան խայտառակ անզգայութեան վրա, ինձ մնում է միայն ասել նրան. «Ամօթ է, պարոն «մանկավարժ»։

Լեւոն Սարգսեանց

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին յունվարի 14-ին հաստատեց Բաթումում նաւթային առանձին թաղ հիմնելու մանրամասն նախագիծը։

—

Մեզ հաղորդում են, որ հայ դերասան Արմենեան շուտով պէտք է տայ մի քանի հայերէն ներկայացումներ Թիֆլիսում։ Նա յայտնի է մեր հասարակութեան, որովհետեւ տասը տարի առաջ Թիֆլիսում մասնակցել է մի շարք ներկայացումների այն խմբի մէջ, որտեղ էին Սիրանոյշ, Թուրեան եւ ուրիշներ։ Այնուհետեւ Արմենեան ուղեւորվել էր Պարիզ, որտեղ ստացել է կօնսերվատօրիայի ուսուցիչների՝ Մունէի, Սիլվենի, Լօժիէյի մօտ։ Նրա գլխաւոր բեպերտուարը ժամանակակից պիեսներն են։ Հետաքրքրական է տեսնել Արմենեանի խաղը։ Նա պէտք է մասնակցութիւն ունենայ վաղվայ երեկոյթի դրական-կօնցերտային բաժնում։

—

Վաղը, կիրակի, յունվարի 20-ին, Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենայ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան տարեկան պարահանդէսը, որը բաղկացած կը լինի հետաքրքրական կօնցերտային բաժնից եւ տեղական ու եւրօպական պարերից։ Պարահանդէսի ղեկավարները ջանք են գործ դրել ճոխացնել պարահանդէսը եւ գրաւիչ դարձնել նրան բազմազանութեամբ։

—

Առեւտրական ուսումնարանների հոգաբարձութիւնը զանազան սուրբերի մասունքներով եւ այլն։ Ամեն մէկը հաւատացնում էր, որ իր ծախածն է իսկական մասունքը, որ տէր ողորմեայի հատիկները կազմված են Քրիստոսի ժամանակ յայտնի ձիթենու կորիզներից։ Մենք գնեցինք մի քանի հատ սադափեայ խաչ եւ մի քանի տէր ողորմեաներ. ամեն մէկս մեզանից ունէր մի պառաւ տատ, հօրաքոյր, մօրաքոյր, որոնք անհամբեր սպասում էին մեր վերադարձին՝ պատուիրած լինելով մեզ բերել անպատճառ Երուսաղէմից «տէր ողորմեայ»։ Մի ուրթսունամեայ հեռաւոր ազգականուհի Գիւլթաղ գիւղում, Մէլիք Ռուստամի հարսը, խիստ պատուիրել էր, որ ես բերեմ պատանք, նշխարք եւ մոմ Երուսաղէմից. «ես չեմ մեռնի, անհամբեր կը սպասեմ մինչեւ բերես պատանքը եւ ինձ պատանեն այն պատանով, որ կարված է Քրիստոսի պատանքի կտորից»։ Իսկ այդպիսի պատանք ծախում են Երուսաղէմում։

Աշխարհիս բոլոր գիտնականները եթէ հաւաքվէին, չէին կարող, ի հարկէ համոզել պառաւ ազգականուհուս, որ Երուսաղէմից բերած պատանը նոյնը կը լինի, ինչ որ Շուշում կարված պատանը։ Ես գնեցի եւ մի պատան, որը, հրէայ վաճառականի հաւատացնելով, եթէ կարված չէ Քրիստոսի պատանի կտորից, բայց անպատճառ կարված է Մարիամ Աստուածածնի պատանի կտորից։

Փողոցից դուրս գալով մեր առաջ երեւաց մի հին շինութիւն. դա Դաւիթ Մարգարէի բերդն էր եւ պալատը, ինչպէս մեզ ասացին, ուր այժմ ապրում է սուլթանի ներկայացուցիչ գայմագամ փաշան եւ ուր հաստատված է Թիւրքական զօրանոցը. ապա մտնելով մի նեղ փողոց, դէպի Սիօնի սարը, անցնելով մի կամարի տակից, մենք հասանք հայոց ս. Յակոբի վանքը, որի դռան առաջ ուխտաւորները պէտք է կանգ առնեն։ Այդտեղ նրանց դիմաւորում է հիւրընկալ վարդապետը, եւ առաջնորդում է նրանց հոգեւորը, ուր մի գաւաթ սուրճ խմելուց յետոյ, առաջնորդում է նրանց էջմիածին եկեղեցին։

Ուխտաւորները կարգով նստում են եկեղեցու մէջ. գալիս է դարպասբնակ եպիսկոպոսը եւ հրաւիրում է բարեպաշտ ուխտաւորներին վճարել Գլխադրի անուամբ հաստատված մի մէջիդ տուրքը, որն ընդունելուց յետոյ, պահպանիչ է ասում եւ ամեն մի ուխտաւորի ձեռքը մի մոմ տալով, տանում են նրանց ս. Յակոբի եկեղեցին. այդ Գլխադրի, այսինքն Յակոբ Առաքեալի գերեզմանի առաջ, ուխտաւորները ծունկ են չոքում եւ սկսում են երգել շարականներ. մի վարդապետ սկսում է չնորհաւորել ուխտաւորների գալուստը, բացատրում է նրանց ճանապարհորդութեան նուիրական նպատակը, յորդորում է ջերմեռանդ ոգով ներկայանալ Գլխադրին եւ տէրունական տեղերին։ Դրանից յետոյ ուխտաւորներին տանում են սեղանատուն՝ կերակուրի եւ ապա հոգեւորուն, ուր գիշերում են։

Հ. Առաքելեան

ունների եւ վերատեսուչների համաժողովը, որ այժմ գործում է Պետերբուրգում, անհրաժեշտ պարեւեկոյթ մանկական բաժնով. խաղացին եւ մի փոքր վոդեվիլ «էս էլ քեզ հինդ ու խաչ»։ Երեխաներին միրգ բաժանեցին։ Հետաքրքիր էր հայկական եալլին։ Ընդհանրապէս երեկոյթը սառն տպաւորութիւն թողեց, կառավարչի թուլութեան պատճառով»։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, յունվարի 4-ին, Լազարեան ճեմարանում տեղի ունեցաւ աշակերտական ներկայացում։ Խաղացին Գոգոլի «Ревизоръ» կոմէդիան եւ Փառնակէսի «Բանտուհեղ» վոդեվիլը։ Վերջը ներկայացվեց «Евгеній Онегинъ» օպերայի մենամարտութեան տեսարանը։ Պէտք է ասած, որ ներկայացումը, ընդհանուր առմամբ, անցաւ ջատ աջող։ Վերջը կայացան պարեր։ Ներկայ գտնվող հասարակութիւնը, երեկոյթից մեծ տպաւորութիւն ստանալով, գոհ սրտով հեռացաւ ճեմարանից»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ս. Գէորգ եկեղեցում երէցփոխի թաղման ժամանակ պատահում է մի ծիծաղելի դէպք։ Եկեղեցու քահանան եւ յաջորդը ճառեր են ասում եւ այնպէս երկինք բարձրացնում հանգուցեալին, որ կինը լսելով, արտասվում է եւ բացականչում «Իսկ ես, նրա կինը, չը գիտէի անգամ, որ նա այնչափ մեծ, երեւելի եւ լաւ մարդ էր»... Լաւ կանէին մեր հոգեւոր հայրերը, եթէ փառաբանէին ունեւոր եւ հարուստ հանգուցեալներին գոնէ... որոշ չափով, որպէս զի չը զարմացնէին նրանց մերձաւորներին»...

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի գիւղատնտեսական ցուցահանդէսին մասնակցելու մի հրաւէր է ստացվել այստեղի գաւառապետի անունով։ Խնդրում են ի ցոյց դնել ցուցահանդէսում Ղուբայի գործերը, որոնք հիմա իրանց արժէքն ունեն եւ մեծ քանակութեամբ սպասվում են եւրոպական չուկաներում»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՏՐԱՆՍՎԱԱԼԸ

—

Ֆրանսիական պարլամենտը յունվարի 7/20-ին կայացած իր նիստում, արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւի քննութեան ժամանակ, զբաղվեց Տրանսվաալի հարցով։

Տրանսվաալի մասին հարցապնդումն արեց պատգամաւոր Ժորժ Բէրրի. նա սկսեց այսպէս.

«Երբ երեք տարուց ի վեր, Հաագայի դեսպանախորհրդից գրեթէ անմիջապէս յետոյ, պայթեց մի կատաղի, անգութ կռիւ բօէրների դէմ, մենք իրաւունք ունենք հարցնել, թէ ինչպէս է լինում, որ Եւրոպան չէ միջամտում, մանաւանդ երբ գիտէ, թէ ինչ նպատակի է ձգտում Անգլիան։ Մեզ կասեն, որ սկզբում Միացեալ-Նահանգները փորձեցին միջամտել, բայց Անգլիան մերժեց. սակայն այն, ինչ որ ծանուցվեց իբրեւ մի զինուորական զբօսանք, դարձել է այժմ մի սարսափելի կռիւ, որ նստել է Անգլիայի վրա մինչեւ այժմ տասը միլիարդ, եւ այսօր, ուրեմն, Անգլիան կարող է տրամադիր լինել լսելու միջնորդութեան ձայնը։ Արդեօք հնարաւոր չէ՞ վերսկսել Միացեալ-Նահանգների 1899-ին արած առաջարկութիւնը։ Պ. Լէօն Բուրժուա ասում էր Հաագում, թէ տկարների իրաւունքները զօրեղների իրաւունքների հետ հաւասարակշիռ են, բայց, դժբախտաբար, այդպէս չէ։ Ապացոյցների մի ահագին կոյտ ցոյց է տալիս, թէ ինչ ձեւով են յարգում անգլիացիները պատերազմի օրէնքները։ Ֆրանսիան իր ատորագրութիւնն է դրել Հաագայի դաշնագրութեան տակ եւ դրանով իրաւունք ունի պահանջել Անգլիայից՝ յարգել այդ դաշնագրութիւնը։ Թող մեր կառավարութիւնը խօսէ, նախ քան որ իրանք հայրենիքի աւերակների տակ թաղված բօէրները մեռնեն այս խօսքերն ասելով. «Աստուած շատ բարձր է եւ Ֆրանսիան շատ հեռու»։

Բերրիից յետոյ խօսում է աբբայ Լէմիր. նա ասում է, որ Հաագայի դաշնագրութեան համաձայն ամեն մի վէճ, որ չէ կարող լուծվել այդ դաշնագրութեամբ, պէտք է լուծվի ազգերի խղճմտանքով։ Բաւական է մարդկային սիրտ ունենալ՝ դատապարտելու համար Տրանսվաալում կատարվող դէպքերը։ Եթէ նոյն իսկ Հաագայի դաշնագրութիւնը գոյութիւն չունենար, Ֆրանսիան այնու ամենայնիւ պէտք է բողոքէր այդ գործողութիւնների դէմ։ Գուցէ նոյն իսկ Անգլիայում գոհ լինեն մեր միջնորդութիւնից, որովհետեւ այդ պատերազմը չէ կարող երկար կան տնտնածառի տեղ, կայացաւ Մարիինսկի օրիորդաց դպրոցի չքաւոր սանուհիների օգտին պարեւեկոյթ մանկական բաժնով. խաղացին եւ մի փոքր վոդեվիլ «էս էլ քեզ հինդ ու խաչ»։ Երեխաներին միրգ բաժանեցին։ Հետաքրքիր էր հայկական եալլին։ Ընդհանրապէս երեկոյթը սառն տպաւորութիւն թողեց, կառավարչի թուլութեան պատճառով»։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Ուրբաթ, յունվարի 4-ին, Լազարեան ճեմարանում տեղի ունեցաւ աշակերտական ներկայացում։ Խաղացին Գոգոլի «Ревизоръ» կոմէդիան եւ Փառնակէսի «Բանտուհեղ» վոդեվիլը։ Վերջը ներկայացվեց «Евгеній Онегинъ» օպերայի մենամարտութեան տեսարանը։ Պէտք է ասած, որ ներկայացումը, ընդհանուր առմամբ, անցաւ ջատ աջող։ Վերջը կայացան պարեր։ Ներկայ գտնվող հասարակութիւնը, երեկոյթից մեծ տպաւորութիւն ստանալով, գոհ սրտով հեռացաւ ճեմարանից»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ս. Գէորգ եկեղեցում երէցփոխի թաղման ժամանակ պատահում է մի ծիծաղելի դէպք։ Եկեղեցու քահանան եւ յաջորդը ճառեր են ասում եւ այնպէս երկինք բարձրացնում հանգուցեալին, որ կինը լսելով, արտասվում է եւ բացականչում «Իսկ ես, նրա կինը, չը գիտէի անգամ, որ նա այնչափ մեծ, երեւելի եւ լաւ մարդ էր»... Լաւ կանէին մեր հոգեւոր հայրերը, եթէ փառաբանէին ունեւոր եւ հարուստ հանգուցեալներին գոնէ... որոշ չափով, որպէս զի չը զարմացնէին նրանց մերձաւորներին»...

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի գիւղատնտեսական ցուցահանդէսին մասնակցելու մի հրաւէր է ստացվել այստեղի գաւառապետի անունով։ Խնդրում են ի ցոյց դնել ցուցահանդէսում Ղուբայի գործերը, որոնք հիմա իրանց արժէքն ունեն եւ մեծ քանակութեամբ սպասվում են եւրոպական չուկաներում»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՏՐԱՆՍՎԱԱԼԸ

—

Ֆրանսիական պարլամենտը յունվարի 7/20-ին կայացած իր նիստում, արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւի քննութեան ժամանակ, զբաղվեց Տրանսվաալի հարցով։

Տրանսվաալի մասին հարցապնդումն արեց պատգամաւոր Ժորժ Բէրրի. նա սկսեց այսպէս.

«Երբ երեք տարուց ի վեր, Հաագայի դեսպանախորհրդից գրեթէ անմիջապէս յետոյ, պայթեց մի կատաղի, անգութ կռիւ բօէրների դէմ, մենք իրաւունք ունենք հարցնել, թէ ինչպէս է լինում, որ Եւրոպան չէ միջամտում, մանաւանդ երբ գիտէ, թէ ինչ նպատակի է ձգտում Անգլիան։ Մեզ կասեն, որ սկզբում Միացեալ-Նահանգները փորձեցին միջամտել, բայց Անգլիան մերժեց. սակայն այն, ինչ որ ծանուցվեց իբրեւ մի զինուորական զբօսանք, դարձել է այժմ մի սարսափելի կռիւ, որ նստել է Անգլիայի վրա մինչեւ այժմ տասը միլիարդ, եւ այսօր, ուրեմն, Անգլիան կարող է տրամադիր լինել լսելու միջնորդութեան ձայնը։ Արդեօք հնարաւոր չէ՞ վերսկսել Միացեալ-Նահանգների 1899-ին արած առաջարկութիւնը։ Պ. Լէօն Բուրժուա ասում էր Հաագում, թէ տկարների իրաւունքները զօրեղների իրաւունքների հետ հաւասարակշիռ են, բայց, դժբախտաբար, այդպէս չէ։ Ապացոյցների մի ահագին կոյտ ցոյց է տալիս, թէ ինչ ձեւով են յարգում անգլիացիները պատերազմի օրէնքները։ Ֆրանսիան իր ատորագրութիւնն է դրել Հաագայի դաշնագրութեան տակ եւ դրանով իրաւունք ունի պահանջել Անգլիայից՝ յարգել այդ դաշնագրութիւնը։ Թող մեր կառավարութիւնը խօսէ, նախ քան որ իրանք հայրենիքի աւերակների տակ թաղված բօէրները մեռնեն այս խօսքերն ասելով. «Աստուած շատ բարձր է եւ Ֆրանսիան շատ հեռու»։

Բերրիից յետոյ խօսում է աբբայ Լէմիր. նա ասում է, որ Հաագայի դաշնագրութեան համաձայն ամեն մի վէճ, որ չէ կարող լուծվել այդ դաշնագրութեամբ, պէտք է լուծվի ազգերի խղճմտանքով։ Բաւական է մարդկային սիրտ ունենալ՝ դատապարտելու համար Տրանսվաալում կատարվող դէպքերը։ Եթէ նոյն իսկ Հաագայի դաշնագրութիւնը գոյութիւն չունենար, Ֆրանսիան այնու ամենայնիւ պէտք է բողոքէր այդ գործողութիւնների դէմ։ Գուցէ նոյն իսկ Անգլիայում գոհ լինեն մեր միջնորդութիւնից, որովհետեւ այդ պատերազմը չէ կարող երկար շարունակվել առանց վնասելու նրա պատուին եւ ֆինանսներին։ Բօէրները կոչ են արել գրութեան. այդ գրութիւնը նրանք խնդրում են իրանց կանանց եւ երեխաների համար։ Ցանկալի է, որ մենք կարողանանք օգնել այդ քաջ պատերազմողներին մեր ողորմութեամբ եւ մեր դիպլոմատիայով։

Ապա խօսք է առնում Լէօն Բուրժուա, որ յայտնում է, թէ որովհետեւ Հաագայի դեսպանախորհրդի ժամանակ Տրանսվաալը թէ դիպլոմատիապէս, թէ իրաւագիտապէս զրկվել է մասնակցութիւնից, ուստի եւ այսօր Հաագայի դաշնակցութիւնը չէ կարելի առաջ բերել ի նպաստ բօէրների։

Ամբիոն է բարձրանում Դելկասսէ եւ հետեւեալ յայտարարութիւնն է անում.

«Արտաքին գործերի մինիստրը պէտք է ուրիշ ձայների ականջ դնէ եւ ոչ իր զգացումների ու սրտի ձայնին։ Անկասկած է, որ պատերազմի սովորութիւնների եւ օրէնքների մասին կայացած դաշնագրութիւնը նպատակ ունի եթէ ոչ ջնջել, գոնէ մեղմացնել պատերազմի աղէտները։ Բայց մեծ պետութիւնները որոշել են գործադրել այդ դաշնագրութիւնը պատերազմի պահանջների համեմատ։ Դաշնագրութիւնը չէ ասում սակայն՝ ով է լինելու դատաւորը, բայց նա պարտաւորութիւն է դնում ազգերի վրա պատերազմ անել մարդկայնութեան եւ մարդկանց իրաւունքների կանոնների համաձայն։ Մեզ չէ վերաբերում արբիտրաժ պահանջելը. մենք այդ կանենք, երբ հաստատ իմանանք, որ մեր առաջարկը կընդունվի, բայց մինչեւ այսօր ոչ մի բան ցոյց չէ տալիս, որ մեր կառավարութեան միջնորդութիւնը նպաստաւոր ընդունելութիւն կը գտնէ։ Եթէ մեր առաջարկը մերժվի, այն ժամանակ մենք պէտք է մեր միջնորդութիւնը ստիպենք ընդունել, իսկ դրանից կը ծագի անխուսափելի պատերազմ. ուրեմն ստիպված ենք յետ կանգնել այդպիսի քայլից։ Ինչ եւ լինեն այն համակրութիւնները, որ ամեն մարդ տածում է մի քաջ ժողովրդի համար, բայց պ. Բերրիի առաջարկած լուծումը այն հետեւանքը կունենայ, որ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը, որը այժմ պէտք է իր կատարեալ ազատութիւնը պահէ, դրանից զրկված կը լինի։

Պարլամենտը ձայների ահագին մեծամասնութեամբ հաւանութիւն տուեց Դելկասսէի յայտարարութեան։

## ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Լայպցիգ, յունվարի 23-ին

Թիւրքիան գուցէ ոչ մի ժամանակ այնպէս չէ գրաւել եւ լարել եւրոպական զօրեղ եւ ազդեցիկ պետութիւնների ուշադրութիւնը, որքան ներկայումս։ Այդ տեսակէտից ամենից աչքի է ընկնում եւ վերջերս չափազանց եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս Գերմանիան, որ քաղաքական նորանոր ծրագիրներ կազմելով՝ ձգտում է Թիւրքիայում ընդհանրապէս եւ Փոքր-Ասիայում մասնաւորապէս քաղաքական եւ տնտեսական զգալի ազդեցութիւն ձեռք բերել, իրագործել երկաթէ կանցէր Բիսմարկի իր ժամանակին նախագծած քաղաքական ծրագիրը։ Գերմանական մամուլն էլ անտարբեր չէ եւ խաղում է իրան պատշաճ դերը գերմանական քաղաքականութեան վերաբերմամբ. նա իր էջերից շատերը նուիրում է այդ այրող, փափուկ եւ նուրբ հարցին եւ առաջնորդում ու ղեկավարում է հասարակական կարծիքը։ Բացի դրանից Գերմանիայում գիտական եւ տնտեսական զանազան ընկերութիւններ են հիմնվում գերմանական ապագայ շահերն ուսումնասիրելու Ասիայում, մանաւանդ Թիւրքիայում։

Այդպիսի ընկերութիւններից մէկն է եւ Նորերս Բերլինում հիմնված «Deütsch-Asiatische Gesellschaft» (Գերմանական-Ասիական ընկերութիւն), որի նախաձեռնութիւնը պատկանում է Թիւրքաց զօրքի յայտնի բարեկարգիչ գերմանացի զինուորական եւ փաշա Ֆոն-դեր Գոլցին։ Այդ ընկերութեան նպատակն է ուսումնասիրելով ծանօթացնել գերմանացիներին Ասիայի (գլխաւորապէս Թիւրքիայի) զանազան մասերի, նրա բնակիչների եւ տնտեսական դրութեան հետ։ «Գերմանական-Ասիական ընկերութիւնը» իր գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնէ տնտեսական տեսակէտից աւելի աչքի ընկնող երկիրների վրա, գլուխ բերէ գիտական եւ տնտեսական մի շարք ձեռնարկութիւններ, որպէս զի Գերմանիան աւելի մեծ եւ զգալի մասնակցութիւն ունենայ Ասիայի գլխաւոր երկիրներում, քան թէ մինչեւ այժմ է ունեցել։ Գրեթէ մի եւ նոյն նպատակին ծառայող մի այդպիսի ընկերութիւն էլ սրանից մի քանի ամիս առաջ կազմվել է Պարիզում „Comité de l'Asie française" անունով։ Այդպիսի ընկերութիւններ մօտիկ ապագայում ուզում են կազմել եւ Անգլիան ու Ռուսաստանը Լոնդոնում եւ Պետերբուրգում։ Բայց որովհետեւ վերոյիշեալ պետութիւնները Ասիայում արդէն ընդարձակ երկրներ են ձեռք բերել, մտահոգական մեծ նուաճումներ են արել եւ Գերմանիայից գրեթէ ամեն բանով գերազանցում են, դրա համար Բերլինի նորակազմ «Գերմանական-Ասիական ընկերութիւնը» իր գոյութիւնը արդարացի է համարում եւ աշխատում է, որպէս զի Գերմանիայի շահերը Ասիայի հետ գործ ունեցող միւս պետութիւնների շահերից առաջ անցնեն, մրցեն եւ գերազանցեն։

Վերոյիշեալ ընկերութիւնը ունի իր առանձին օրգանը՝ «Asien» անունով հանդէսը։ Մինչեւ այժմ լոյս են տեսել այդ հանդէսի միայն երկու համարները, որոնք բազմաբովանդակ են եւ պարունակում են մի շարք գիտական ուսումնասիրութիւններ Թիւրքիայի, Պարսկաստանի եւ ուրիշ երկրների մասին։ Այդ հանդիսումն է լոյս տեսել, ի միջի այլոց, եւ պրոֆէսոր դոկտոր Հ. Ցիմմերէրի «Հայաստան» վերնագրով աշխատութիւնը, որի հետ առանձնապէս ժամանակին կը ծանօթացնենք «Մշակի» ընթերցողներին։ Հանդէսը հրատարակվում է յայտնի քաղաքատնտես Ֆօսբերգ-Ռեկօվի խմբագրութեամբ։

Հռչակաւոր գիտնական Ր. Վիրխովի նախաձեռնութեամբ կազմակերպած գերմանական-հայկական գիտական էկսպեդիցիան, որ անցեալ տարի ամառը ուղեւորվել էր Հայաստան եւ Փոքր-Ասիա պատմական, աշխարհագրական եւ մարդաբանական ուսումնասիրութիւններ կատարելու, մեծ աջողութիւն է ունեցել եւ էկսպեդիցիայի առաջնորդ դոկտոր Վալդեմար Բելքը բազմազան նիւթերով արդէն վերադարձել է Բերլին։ Յունվարի 25-ին (ն. տ.) Բերլինում նշանակված էր Մարդաբանական ընկերութեան ժողովը, որտեղ դոկտոր Վ. Բելքը պէտք է մանրամասն զեկուցումն տար գիտական արշաւախումբի ուսումնասիրութեան արդիւնքների մասին, բայց, դժբաղդաբար, Ր. Վիրխովը անսպասելի կերպով հիւանդացաւ եւ ժողովը դրա համար յետաձգվեց մնորոշ ժամանակով մինչեւ յարգելի գիտականի առողջանալը։ Ժողովը հաւանօրէն կը կայանայ մարտի սկզբներին, որի մասին մենք ժամանակին կը հաղորդենք։ Դոկտոր Վ. Բելքը նախապատրաստվում է զեկուցումն տալու եւ այն նախապատմական բազմաթիւ գերեզմանների մասին, որ ինքը 1888—91 թ. պեղել է Անդրկովկասում։ Փոքր-Ասիայում եւ Հայաստանում գտած բոլոր հնութիւնները որոշել են նուիրելու Բերլինի ազգագրական գլխաւոր թանգարանին կամ Հին թանգարանի Առաջաւոր Ասիայի հնութիւնների համար նշանակված բաժանմունքին։

Լ. Բաբայեան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թիւրքական պետական խորհրդի անդամ եւ Տրիպոլիսի նախկին զիներալ-նահանգապետ Իսմայել Քեամիլ-բէյի բաց նամակը, որ տպագրված էր Ֆրանսիական լրագիրներից մէկում եւ ուղղված էր Ֆրանսիական պատգամաւորների ժողովին, մեծ աղմուկ հանեց երիտասարդ Թիւրքերի շրջանում։ Իսմայիլ Քեամիլ բէյ «ի սէր արդարութեան եւ յօգուտ հէնց իրան՝ Թիւրքիայի» առաջարկում է Ֆրանսիայի ներկայացուցիչներին պաշտպան հանդիսանալ փոքր-ասիական նահանգների եւ Մակեդոնիայի քրիստոնեաներին եւ, Ռուսաստանի հետ միացած՝ անյապաղ պահանջել Թիւրքիայից Բերլինի դաշնագրով յանձն առած պարտաւորութիւնների կատարումը։ Այդ նամակի մէջ Քեամիլ-բէյ, ի միջի այլոց, ասում է. «Իզուր են իմ ընկերները՝ Թիւրք հայրենակիցների՝ ջանքերը ազատելու Թիւրքական պետութիւնը, Բաղդադի ճանապարհը անցկացնելուց եւ գերմանական ընկերութիւններին երկաթուղիական գծերի նոր կոնցէսսիաներ տալուց յետոյ. երբ փոքր-ասիական նահանգներում ամեն տեղ կը հիմնվեն գերմանական գաղթականութիւններ, կը բացվեն գործարաններ, Անատոլիայի քրիստոնեաները կը դառնան բողոքականներ եւ կենթարկվեն նրանց բարոյական ու տնտեսութեան ազդեցութեան,—այն ժամանակ Թիւրքիայի քաղաքական անկախութիւնը կը դառնայ մի կեղծիք եւ օսմանների ժառանգութիւնը de facto կանցնէ Հօհէնցօլլէրներին։ Պէտք է չը մոռանալ, որ հէնց հիմա էլ Թիւրքական զօրքի եւ նաւատորմի գլխաւոր վարիչները, Թիւրքիայի քաղաքական ու տնտեսական կեանքի զեկավարները գերմանացիներն են։ Այս պատճառով էլ Ֆրանսիան եւ եւրոպական միւս պետութիւնները, նոյն իսկ իրանց շահն աչքի առաջ ունենալով, պէտք է հանդէս գան ընդհանուր կօնտրոլի պահանջով Թիւրքիայի վրա, քանի դեռ ուշ չէ եւ քանի որ Թիւրքիայի եւ Գերմանիայի մէջ

կապելիք դաշնադրութեամբ, սուլթանի թագը եւ դինադրոյը հանդիսաւորապէս չեն յանձնված Վիլհելմ II-ին»։

—«Königb. Zeit.» լրագրի ստացած տեղեկութիւններով հարաւային Աֆրիկայից, լորդ Կիտչէնէր նորից փորձեր է անում բանակցութիւններ սկսելու բօէրական հրամանատարների հետ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին։ Սակայն բօէրական բոլոր զօրապետները, առանց բացառութեան, յայտնեցին Կիտչէնէրի լիազօրներին, որ նրանք կըռւում են եւ պիտի շարունակեն կռւել լիակատար ազատութիւն ձեռք բերելու համար։ Դէլարէյ մինչեւ անգամ յայտնեց, թէ նա կը շարունակէ պատերազմը նոյն իսկ այն դէպքում, եթէ մի հատիկ մարդ միայն մնայ նրա զօրաբաժնի մէջ։ Այդ դէպքում էլ նա ոչ մի պայմանով անձնատուր չի լինի, որովհետեւ, մի եւ նոյն է, անգլիացիները իրանց պայմանը չեն կատարի։

—Թէպէտեւ անգլիական Էդուարդ VII թագաւորի հանդիսաւոր թագադրութիւնը պէտք է տեղի ունենայ վեց ամսից յետոյ, բայց հէնց այժմեանից անգլիական լրագիրները դիմել են զանազան տեղեկութիւններով այն պարգեւների մասին, որոնք պէտք է նշանակվեն զանազան պետական անձերի՝ թագադրութեան առիթով։ Այսպէս, սրանք հաղորդում են, որ լորդ Սալիսբիւրի կը ստանայ դուքսի տիտղոս։ Պարգեւների ցուցակում չեն մոռացված եւ ընդդիմադիր կուսակցութեան պատկանող աչքի ընկնող անձնաւորութիւնները, որոնց թւին պատկանում են Վիլեամ Հարկուրտ եւ Կեմպբէլ-Բաններման։ Վերջինները կը ստանան անգլիական պէրի կոչում։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 յունվարի

ՎՈԼՈԳԴԱ։ Տօնավաճառը բացված է։

ԿՈՒՐՍԿ։ Բացված է նահանգական ազնուականութեան ժողովը։

ԼՕՆԴՕՆ։ Նիդէրլանդեան կառավարութիւնը չը ներկայացրեց խաղաղութեան առաջարկութիւնները, այլ աւելի աշխատում էր գրգռել անգլիական կառավարութեան՝ միջոցներ եւ ճանապարհներ գտնել պատերազմը վերջացնելու համար։

ՎԵԼԼԻՆԳՏՕՆ։ Նոր-Զէլանդիայից հարաւային Աֆրիկա գնացին 500 օֆիցէրներ եւ զինուորներ ձիերով։ Մնացած 500 կերթան փետրվարի 8-ին։ Եթէ հարկաւոր կը լինի, կերթան էլի երկու զօրաբաժիններ՝ ամեն մէկը հազար մարդուց բաղկացած։

ՏԵԱՆՁԻՆ։ Կայսերական հրամանով հրամանագրվում է ծովապետ Եիին ծովային դպրոց հիմնել Զիֆուի մէջ։

ՎԱՐՇԱՎԱ։ Երկրագործական դպրոցի կանոնադրութիւնը հրէաների համար հաստատված է։

ԺԻՏՕՄԻՐ։ Տեղական կալուածատէր բարոն Շօդուար նուիրեց 25,000 ռուբլի Մարիինսկիի մանկական ապաստարանի արհեստագիտական դասարանները ընդարձակելու համար։

ԿԻԵՎ։ Գոգոլի յիշատակը տօնելու առիթով, Նէստոր Տարեգրի պատմական ընկերութիւնը կառաջարկէ վեց հրապարակական դասախօսութիւններ։

ԼՕԴԶ։ Ալէքսանդրովում տեղի կունենայ վարշավա-վիլէնական, կալիշեան եւ պրուսական երկաթուղիների ներկայացուցիչների համաժողովը՝ կալիշեան երկաթուղին պրուսականի հետ միացնելու հարցը քննելու համար։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Մինիստրների Մասնաժողովը մերժեց նահանգական զէմստվոյի միջնորդութիւնը՝ զէմստվոյի ձայնաւորների ընտրութեան կարգը վերականգնելու մասին 1864 թ-ի կանոնադրութեան համաձայն։

Սեւաստոպոլում բացվում է մանկական ապաստարան Կայսր Ալէքսանդր II-ի անունով։

ՄՕՍԿՎԱ։ Սլավոնական ընկերութեան կից կազմված յանձնաժողովը մշակեց հանդէսների ծրագիր 1877—1878 թ-երի ազատարար պատերազմի քսան եւ հնգամեակի առիթով։

ԽԱՐԿՕՎ։ Խարկովի համալսարանը տօնեց իր գոյութեան 99-դ տարեդարձը։

ԼՕԴԶ։ Տեղի ունեցաւ տեղական գործարանատէրերի ժողովը, որոնք իրանց կարծիքը յայտնեցին մանած իրերի վրա մաքսահարկ դնելու վերաբերմամբ, որը կը ներկայացվի ֆինանսների մինիստրին։

18 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ. Խէրսոնի նահանգապետ իշխան Օբոլէնսկի նշանակվում է Խարկովի նահանգապետ. մամուլի գործերի գլխաւոր վարչութեան խորհրդի անդամ գաղտնի խորհրդական Եանկուլիս արձակվում է պաշտօնից, իր խնդիրքի համաձայն։

Զինուորական խորհուրդը որոշեց մտցնել տեղագրական դծագրութիւն պարտաւորիչ առարկաների թւում ընդունելութեան քննութիւնների ժամանակ Նիկոլաեւսկայա ակադէմիայում 1902 թ-ից։

ԲԵՐԼԻՆ։ Մաքսային ակադեմի համար կազմված յանձնաժողովում ընդունվեց մի առաջարկութիւն՝ ապրանքների ծագման տեղի մասին վկայականների պարտաւորիչ լինելու մասին, չը նայելով կառավարութեան յայտարարութեան, որ այդ յանձնարարութիւնը ընդունելու դէպքում, յոյս չի մնայ, որ համաձայնութիւն կը կայանայ նոր ակադեմի նախագծի վերաբերմամբ։ Ագրարների օրդանները կատաղի կերպով բողոքում են կիսապաշտօնական այն յայտարարութեան առիթով, որ կայսերական կառավարութիւնը չի համաձայնվի, որ սրանից յետոյ եւս բարձրացնվի հացի ակադեմը, ոչ էլ, որ որոշվի ամենապակաս չափ գիւղատնտեսական որ եւ է արդիւնքի ակադեմի համար։

ԼՕՆԴՕՆ։ Հրատարակված է կորստի ցուցակը Աբրահամսկրաալի մօտ, կօֆֆիֆոնտէյնի մօտ, սպանվեցին սեսոէկեան գնդի գնդապետ Դիւմուլէն եւ 8 զինուորներ. վիրաւորված են 7 հոգի։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Բացված է ազնուականութեան ժողովը։

ԿԻՇԻՆԷՎ։ Տիրապալ կայարանում տեղի ունեցաւ ապրանքատար վագոնի խորտակումն. փշուր-փշուր են եղած 13 վագոններ. սպանված է գլխաւոր կոնդուկտորը, վիրաւորված է մեքենավարը, նրա օգնականը, երկու կոնդուկտորներ եւ ձէթ քսողը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ն. Ի. Դզեղիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.

Դ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

## ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

**ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ**

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергіевская ул., д. 12.

## ԹԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Ֆրանսիական՝ զանազան ֆիրմաների, Բաղդադի՝ Պասխալիդի եւ ուրիշների վաճառվում է Գ. Մուլեարսկու առեւտրական տանը Թիֆլիսում, Երեւանեան հրապարակ, № 25։

4—4

## ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ց. Տէր-Միրաքեանի հետեւեալ աշխատութիւնները.

«Դեռահասների ազատ ընթերցանութիւնը», 190 յանձնարարելի ու մերժելի գրքերի ցուցակով, գինն է 60 կ.

«Ժողովրդի ընթերցանութիւնը—20 կ.

«Այբբենարան» առանց ուսուցչի կարդալ սովորելու համար, 94 պատկերով—35 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ", Г. Галустяну, Лорисъ-Меликовская, № 11. 2—5

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԻԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ առեւանի մէջ նշանակված է աճուրդ ներկայ տարվայ յունվարի 30-ին՝ կապալով տալու Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող գիւղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում։ Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն պատշաճ գրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ դիւանատանը 10—2 ժամը։

Անդամ կոնսիստորիայի՝

Զաքարիա քահանայ Զարդեղեանց

2—3

## ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յունվարի 19-ին,

նշանակված է

## ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

սովորական կարգով։

2—2

ՇՈՒՎԱՎԷՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՖԷԼԴՇԷՐՈՒՀԻ։

Ցանկացողները կարող են դիմել տանուտէր Մէհրաբեանին։ 3—3

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԵՐ

## Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գիտական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճները ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների չինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատակ (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԿՈՒ, «Դվորցովայա Նօմէրներ» հիւրանոցում Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։

55—100

ՄԻ ՀԱՑ ԱՇԱԿԵՐՏ, որ չքաւորութեան պատճառով չէ կարողանում շարունակել ուսումը, բարեգործների ուշադրութիւնն հրաւիրում։ Հասցէն՝ Ներսէսովսկայա փողոց տուն իշխան Թումանովի, Մէլքումեանի կարասիքի խանութ։ Հայկ Տէր-Գրիգորեանին։

3—3

## ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են՝

ԱՂԱՆԵԱՆ Գ. ա. քահ., «Նամակագիրք», օտար աղբիւրների հետեւողութեամբ, Թիֆլ. 1902 թ. գինն է 50 կ.

ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., «Առողջապահական նուէր նորատի կանանց, Այէքս. 1901 թ. գ. 20 կ. Ծախվում են նաեւ նոյն բժշկի միւս առողջապահական գրքոյկները։

ԱՂԱՆԵԱՆ Գ. ա. քահ., Պատի օրացոյց—50 կ., Ծոցի օրացոյց—15 կ. եւ Ս. Էջմիածնի ծոցի օրացոյց—20 կ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (չ.) 1—5

## ԼՈՑՍ ՏԵՍԱԼ

ԼԷՕ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

XVIII ԴԱՐ

Ամբողջ մաս

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ

Ծախվում է. 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшакъ". 2) «Մուրճ» տմսագրի խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мурчъ. 3) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ"

Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 ռուբլի 50 կոպէկ։

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XIV շրջան

## ՆԻԿՈՂԱՅՈՍՅ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առեւտրական եւ գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, եւ եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՏՈՒՆԴԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, համադերձ նաւթային արդիւնաբերական եւ կերօսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ) Առեւտրական թուաբանութիւն։

Գ) Առեւտրական նամակագրութիւն։

Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։

Ե) Գեղագրութիւն եւ ամենավաղ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1902 թ-ի յունվարի 25-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։

4—25

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

Լ. ՏՕԼՍՏՕԲ.—«ԳԱՐՈՒԹԻՒՆ» (վէպ. արտատպած «Մուրճ» ամսագրից), թարգմ. Տ. Յովհաննիսեան, գ. 1 ր. 25 կ. (ճանապարհածախսով 1 ր. 55 կ.)։

Ալ. ԴՕԴԷ.—«ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ եւ ՌԻՍԼԷՐ Ա.Ի.Ա.Գ» (վէպ. արտատպած «Մուրճ» ամսագրից) թարգմ. Տ. Յովհաննիսեան. գ. 1 ր. (ճանապարհածախսով 1 ր. 25 կ.)։

ԼԵՐՄՕՆՏՕՎ. «Դ Ե Ի». թարգմ. Յ. Միրզայեանց. գ. 10 կ. (ճանապարհածախսով 20 կ.)։

Դիմել Տիգրան Յովհաննիսեանին՝ Тифлисъ, Вольямивовская ул., д. 3, присяжному повѣренному Тиграну Нерс. Іоаннисянцъ, կամ «Մուրճ» խմբագրութեանը՝ Тифлисъ, редакція журнала „Мурчъ".

4—5

# Паровая Рисоочистительная Мельница

## „ВОСТОКЪ"

## ВЪ БАКУ

Принимаетъ заказы на рисъ всѣхъ сортовъ Прейсъ-курантъ и образцы высылаются безплатно.

10—10

Дозволено Цензурою, Тифлисъ, 18 Января 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.